ՑՈԼԱԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականության կենտրոնում ի սկզբանե եղել է Ֆրանսիայի հետ բազմակողմ հարաբերությունների զարգացումը: Դա ուներ հիմնավորված պատճառներ, որոնցից պետք է առանձնացնել խոր արմատներ ունեցող հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչությունները և Ֆրանսիայում մեծ ու ազդեցիկ համայնքի առկայությունը: Ոչ պակաս կարևոր էր այն, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգը հնարավորինս մերձեցվել էր ֆրանսիական մոդելին:

Հարաբերություններ բարձրագույն մակարդակով

Հայաստանի և Ֆրանսիայի նախագահների հանդիպումների ժամանակ երկուստեք առանձնահատուկ կարևորություն է տրվել Հայաստանի օրենսդրական դաշտի ձևավորմանն ու զարգացմանը: Հայ-ֆրանսիական բազմակողմ հարաբերությունների զարգացման համար կարևոր խթան է հանդիսացել երկու երկրների նախագահների բարձր մակարդակով հանդիպումները: 1993թ. մարտի 12-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանի միջև Փարիզում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիական Հանրապետության միջև փոխըմբռնման, բարեկամության և համագործակցության մասին» միջպետական պայմանագիրը[1], որն ուրվագծում էր երկու երկրների միջև հետագա համագործակցության հնարավոր ոլորտները:

[1] «Հայաստանի Հանրապետություն», 16 մարտ, 1993թ., թ. 2-3:

1996թ. հունիսի 11-13-ը Լևոն Տեր-Պետրոսյանի Ֆրանսիա կատարած պաշտոնական այցելության ժամանակ[2], տեղի ունեցան նրա հանդիպումները նախագահ Ժակ Շիրակի, վարչապետ Ալեն Ժյուպեի և պաշտոնատար այլ անձանց հետ: Այցի ընթացքում կնքվեց «Եկամուտների ու գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափումը կանխելու վերաբերյալ» պայմանագիրը, որի նպատակն էր խթանել ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջև, ինչպես նաև ստորագրվեց էներգետիկայի ոլորտում հայ-ֆրանսիական համագործակցության վերաբերյալ հուշագիրը[3], որը դարձավ էներգահամակարգի բնագավառում երկկողմ միջգերատեսչական հարաբերությունների հիմքը:

Ֆրանսիայի հետ Հայաստանի տարբեր մակարդակներով միջպետական համագործակցությունը նոր փուլ թևակոխեց 2000-2001թթ. ընթացքում: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը 2000թ. հունիսի 30-ից հուլիսի 2-ը և 2001թ. հունվարի 25-26-ը աշխատանքային այցեր կատարեց Ֆրանսիա և բանակցություններ վարեց հայ-ֆրանսիական հարաբերությունների գերակա ուղղությունների պետական հովանավորության և դրանց խոչընդոտող արգելքների հաղթահարման նպատակով:

2001թ. փետրվարի 12-14-ը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը պետական այց կատարեց Ֆրանսիա: Այցի ընթացքում Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի հետ քննարկվեցին Կովկասի խաղաղության ու կայունության, երկու երկրների միջև տնտեսական, քաղաքական, մշակութային և ռազմական համագործակցության հարցերը:

Միջխորհրդարանական կապեր

Հայ-ֆրանսիական միջխորհրդարանական կապերը պաշտոնական բնույթ ստացան Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի 1990թ. ընտրություններից հետո:

1990թ. սեպտեմբերին Ֆրանսիայի Ազգային Ժողովում ստեղծվեց Ֆրանսիա-Հայաստան պատգամավորական խումբ, որը նպատակ ուներ

---

[2] "France Armenie", Juin, 1996, p. 2

[3] ՀՀ ԱԳՆ-ի ընթացիկ արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ. 27

ուսումնասիրել երկկողմ հարաբերությունների զարգացման հնարավորությունները[4]: Խմբի անդամները հիմնականում Ֆրանսիայի հայաշատ շրջաններից ընտրված պատգամավորներ էին: 1992թ. հոկտեմբերին տեղի ունեցավ ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանի պաշտոնական այցելությունը Ֆրանսիա, որի ժամանակ երկու երկրների խորհրդարաններում ստեղծվեցին բարեկամության խմբեր: Ֆրանսիայի Ազգային ժողովում այդ խմբի ղեկավարն էր Ֆրանսուա Ռոշբլուանը, Հայաստանի Գերագույն Խորհրդում Հենրիկ Իգիթյանը: 1994թ. սեպտեմբերին Ֆրանսիայի Ազգային ժողովի պատվիրակությունը Ֆ. Ռոշբլուանի գլխավորությամբ այցելեց Հայաստան, իսկ 1995թ. մարտի 9-ին Հայաստանի ԳԽ պատվիրակությունը փոխադարձ այց կատարեց Ֆրանսիա[5]: Հանդիպումների ու բանակցությունների արդյունքում ՀՀ Գերագույն Խորհրդի և Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի միջև կնքվեց համագործակցության համաձայնագիր ու կողմերը ձեռք բերեցին հետևյալ պայմանավորվածությունները.

- Ընդլայնել համագործակցությունը երկու երկրների խորհրդարաններում ստեղծված բարեկամության խմբերի միջև, բարձրացնել նրանց դերը միջխորհրդարանական գործնական հարաբերությունների ապահովման համար
- Միջխորհրդարանական համագործակցությունը ամրապնդել պատգամավորների ու պաշտոնյաների փոխադարձ այցերով, երկու երկրների խորհրդարաններին անհրաժեշտ հրապարակումների ու տեղեկատվության փոխանակմամբ
- Ֆրանսիայի Ազգային ժողովը պարտավորվեց ցույց տալ տեխնիկական օգնություն ՀՀ Գերագույն Խորհրդին և նրա պաշտոնյաների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ՀՀ ԳԽ-ի պաշտոնյաների համար[6]

1996թ. մայիսին Շառլ Ազնավուրի ուղեկցությամբ (որը ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպան է Ֆրանսիայում) Հայաստան այցելեց

---

[4] «Հայաստանի Հանրապետություն», 25 փետրվար, 1992թ., թ. 2:
[5] «Ազգ», 10 մարտ, 1995թ., թ. 2-3:
[6] ՀՀ ԱԳՆ-ի ընթացիկ արխիվ, «Հայ-ֆրանսիական պայմանագրեր» թղթապանակ, թ. 10:

Ֆրանսիայի Սենատի նախագահ Ռընե Մոնորին, որը հանդիպեց ՀՀ ԱԺ նախագահի հետ և ելույթ ունեցավ ՀՀ Ազգային ժողովում:

Երկու երկրների օրենսդիր մարմինների ակտիվ և արդյունավետ գործակցության հիմքում, անկասկած, ընկած էր երկու ժողովուրդների հոգեհարազատության գործոնը, որը, պատմականորեն ծանր փորձությունների ենթարկվելով, ավելի բյուրեղացավ Հայաստանի անկախության տարիներին: Հարկ է նաև նշել, որ Ֆրանսիայում օրենսդիր մարմինների ընտրություններում հայ համայնքը մշտապես ի զորու է եղել իր արդար պահանջները լսելի դարձնել ֆրանսիական իշխանություններին, ինչն, իր հերթին, երկու երկրների խորհրդարանների առջև ծառացած մի շարք խնդիրների լուծման համար ստեղծել է փոխադարձ ընկալելի մթնոլորտ :

1997թ. մայիսին Ֆրանսիայում արտահերթ խորհրդարանական ընտրություններում հաղթեցին ձախ ուժերը և ձևավորվեց հայ-ֆրանսիական բարեկամության նոր խումբ սոցիալիստ ժան Պոլ Բրետի գլխավորությամբ[7]: Այդ խումբը ծավալուն աշխատանքներ է տարել հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ օրինագիծը Ֆրանսիայի Ազգային ժողովում քննարկման դնելու ուղղությամբ ու նրա ջանքերի շնորհիվ էր նաև, որ 1998թ. մայիսի 29-ին ընդունվեց օրենք հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ[8]:

Ակտիվ ու արդյունավետ շփումներ են եղել նաև Ֆրանսիայի Սենատի անդամների հետ, որի ապացույցն են հաճախակի փոխայցելությունները: Այսպես, 1998թ. հունիսի 22-29-ը Հայաստանում էր գտնվում Ֆրանսիայի Սենատի պատվիրակությունը՝ սենատի հայ-ֆրանսիական խմբի ղեկավար սենատոր ժակ Ուդենի գլխավորությամբ: Պատվիրակությանն ուղեկցում էր ֆրանսիացի գործարարների մի խումբ, որի նպատակն էր ուսումնասիրել Հայաստանի հետ տնտեսական համագործակցության հնարավոր ոլորտները[9]:

1999թ. մարտի 30-ից ապրիլի 4-ը ՀՀ ԱԺ պատվիրակությունը նախագահ Խ. Հարությունյանի գլխավորությամբ այցելելով Ֆրանսիա հանդիպումներ է

---

[7] "France Armenie", Mai, 1997, p. 2.

[8] Լ.Ա.Բարսեղյան, «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է հայոց ցեղասպանությունը», Երևան, 1998թ., p.3 :

[9] «Հայաստանի Հանրապետություն», 30 հունիս, 1998թ., p. 1-2:

ունեցել Սենատի նախագահ Ք. Պոնսլեի և Ֆրանսիայի ԱԺ նախագահ Լ. Ֆաբյուսի հետ: Հանդիպումների ժամանակ քննարկվել են տարածաշրջանի քաղաքական կայունության և հակամարտությունների խաղաղ ճանապարհով կարգավորման հարցերը:

Ֆրանսիայի Սենատի պատվիրակությունը նախագահ Ք. Պոնսլեի գլխավորությամբ հարավկովկասյան երկրներ այցի շրջանակներում 1999թ. հուլիսի 20-ին ժամանեց Հայաստան, ուր պայմանավորվածություն ձեռք բերվեց մշակել երկարաժամկետ ծրագիր Ֆրանսիայի Սենատի և ՀՀ Ազգային Ժողովի միջև: Հանդիպումների արդյունքում որոշվեց Անդրկովկասի երեք պետությունների խորհրդարանների նախագահների և Ֆրանսիայի Սենատի նախագահի միջև պարբերական հանդիպումներ անց կացնել, որը և սկզբնավորվեց 1999թ. դեկտեմբերի 15-ին:

Ֆրանսիայի Սենատը 2000թ. նոյեմբերի 8-ին (2000թ. փետրվարի 2-ի և մարտի 24-ի երկու մերժումից հետո) քննարկման դրեց և քվեարկությամբ ընդունեց հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ օրենքի նախագիծը, որը ֆրանսիական ժողովրդավարական ոգու և պատմական ճշմարտության անկողմնակալ գնահատման աներկբա դրսևորումներից էր[10]:

Միջկառավարական համագործակցությունը

Ֆրանսիայի հետ երկկողմ կառավարական հարաբերությունները ձևավորվել են ՀՀ կազմավորումից ի վեր և զարգացել են միջպետական համագործակցության ընդլայնմանը համահունչ: Այսպես, դեռ 1992թ. ապրիլին պաշտոնական այցով Ֆրանսիա է մեկնել ՀՀ փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանը, որը և հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի նախագահի, վարչապետի, մի շարք նախարարների հետ: Այդ ընթացքում ֆրանսիական պաշտոնական շրջանակները պատրաստակամություն են հայտնել օժանդակել ՀՀ պետության ամրապնդմանը: Հանդիպումների ժամանակ քննարկվեցին նաև կոնկրետ ոլորտներում համագործակցության հնարավորությունները:

Այդ այցին հաջորդել են ՀՀ կառավարական պաշտոնյաների նոր այցելությունները Ֆրանսիա, որոնց արդյունքում քննարկվել են ֆրանսա-

---

[10] Է.Ա.Բարսեղյան, «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է հայոց ցեղասպանությունը», Երևան, 1998թ., թ.10:

հայերի մասնակցությամբ Ֆրանսիական Բուշ-դյու-Ռոն դեպարտամենտի կողմից Հայաստանին գործուն աջակցություն ցույց տալու, Մեծամորի ատոմակայանի վերագործարկմանը աջակցելու խնդիրները:

1997թ. դեկտեմբերի 7-11-ը Ֆրանսիա պաշտոնական այց կատարեց ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանը: Կայացած հանդիպումների ժամանակ նա ներկայացրել է Հայաստանի դիրքորոշումը ինչպես ԼՂ հակամարտության կարգավորման, այնպես էլ տարածաշրջանային անվտանգության ու քաղաքա-կան կայունության հարցերի վերաբերյալ: Հիմնական շեշտադրումները վերա-բերվել են ֆրանսիական մասնավոր կապիտալի Հայաստան մուտքին, և հայաստանյան ապրանքների Ֆրանսիա արտահանման ծավալների ընդլայնմանը:

Հայ-ֆրանսիական պետական կառավարման համակարգերի հարաբերությունները զարգացել են նաև համապատասխան գերատեսչությունների գործակցության շրջանակում:

Ներքին գործեր և պաշտպանություն

Իրավապահ մարմինների մակարդակով հայ-ֆրանսիական հարաբերությունները ի սկզբանե նպատակաուղղվել են հանցավորության դեմ պայքարի արդյունավետ կազմակերպմանը: Այդ ուղղությամբ 1995թ. մարտի 22-ին երկու երկրների ներքին գործերի նախարարությունների միջև ստորագրվել է համաձայնագիր «Ներքին անվտանգության ոլորտում համագործակցության մասին»[11]: Այս համատեքստում շփումներն ընդգրկել են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են պայքարը ահաբեկչության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, դրամանենգության դեմ և այլն: Այդ ուղղություններով փորձի փոխանակման և վերապատրաստման կարգով տարբեր ժամանակներում կազմակերպվել են փորձագետների փոխայցեր:

Հայաստանի և Ֆրանսիայի պաշտպանական կառույցների միջև հարաբերությունները դեռևս չեն անցել ռազմաուսումնական համագործակցության մակարդակից: Ենթադրաբար ֆրանսիական կողմի համար Հայաստանի հետ պաշտպանական գործակցության խորացման խոչընդոտ է հանդիսացել ԼՂ հակամարտության լուծման գործում Ֆրանսիայի միջնոր-

---

[11] ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական պայմանագրեր» թղթ., թ. 12

դական առաքելությունից բխող ռազմական կապերի ոլորտում չեզոքություն պահպանելու հրամայականը:

Առողջապահություն և բնապահպանություն

ՀՀ և Ֆրանսիայի միջև սերտ համագործակցություն է ծավալվել առողջապահության բնագավառում: Մասնավորապես, Երևանի և Մարսելի բժշկական համալսարանների միջև իրագործվել է ուսանողների փոխանակու-թյուն, կազմակերպվել են համատեղ գիտական աշխատանքներ ու սեմինարներ[12]:

«Հանրային օգնություն – Փարիզի հիվանդանոցներ» կազմակերպության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ ջանքերով իրականացնել հայ և ֆրանսիացի բժիշկների վերապատրաստման դասընթաց-ներ: Բացի այդ միջհիվանդանոցային համագործակցության ծրագրեր են իրականացվել Երևանի Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտի ու Փարիզի «Բոժոն» հիվանդանոցի միջև, ինչպես նաև Երևանի հանրապետական մանկական հիվանդանոցի և Ֆրանսիայի էքս-Ան-Պրովանս քաղաքի հիվանդանոցի միջև[13]:

ՀՀ Առողջապահության նախարարությունը ակտիվ համագործակցել է Ֆրանսիայի Հայ բժիշկների միության (UMAF) ու նրա Փարիզի և Ռոն-Ալպի մասնաճյուղերի հետ[14]: Միությունը մեծ արդյունավետությամբ է գործել հատկապես 1988թ. երկրաշարժից հետո՝ տասնյակ խմբեր ուղարկելով աղետի գոտի, մեծաքանակ դեղորայք և բժշկական սարքավորումներ առաքելով Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հիվանդանոցներին: Ֆրանսահայ բժիշկների միության ջանքերով ժամանակակից բժշկական սարքավորում-ներով են ապահովվել Էրեբունու և Միքայելյանի անվան հիվանդանոցները: UMAF-ի Ռոն- Ալպի մասնաճյուղի ֆինանսավորմամբ Աբովյանում տեխնիկապես հագեցվել է բժշկական լուծույթների արտադրման գործարանը, ինչպես նաև կազմակերպությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել

---

[12] ՀՀ ԱԳՆ-ի ընթացիկ արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ. 17:

[13] Նույն տեղում, թ. 17:

[14] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 391, ց. 9, գ. 148, թ. 2-3:

«Էրեբունի» հիվանդանոցում ստոմատոլոգիական կենտրոնի բացմանը[15]: Բացի այդ մեծ թվով հայ բժիշկներ վերապատրաստման դասընթացներ են անցել Ֆրանսիայում:

ՀՀ Առողջապահության նախարարությունը համագործակցել է նաև Մարսել քաղաքի «Ազատագրություն» կազմակերպության հետ, որի արդյունքում իրականացվել է հայ հիվանդ երեխաների Ֆրանսիայում բուժելու «Հույսի շղթա» ծրագիրը[16]: Վերոնշյալ կազմակերպության հետ համագործակցության արդյունքում վերակառուցվել է Երևանի Պետական բժշկական համալսարանին կից գործող ատամնատեխնիկական դպրոցը:

Բնապահպանության բնագավառում հայ-ֆրանսիական միջպետական համագործակցության ուղղությամբ առաջին քայլն արվել է 1999թ., երբ Ֆրանսիայի Բնության և Շրջակա միջավայրի պահպանության ֆոնդը պաշտոնապես դիմել է ՀՀ բնապահպանության նախարարությանը առաջարկելով համատեղ իրականացնել «Հայաստանի անտառների վերականգնում» ծրագիրը, իսկ հայկական կողմը հայտնել է իր հավանությունն ու անվերապահ աջակցությունը դրան: Նշված նախաձեռնության մանրամասների հստակեցումները շարունակվում են և զուգահեռաբար աշխատանքներ են տարվում բնապահպանության ոլորտում փոխգործակցության նոր եզրեր գտնելու համար:

Սահմանադրական դատարանների և արդարադատության մարմինների միջև կապեր

ՀՀ սահմանադրական դատարանի ստեղծման համար նախատիպ է ծառայել Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը: Հետևապես, այս երկու մարմինների միջև համագործակցությունը ի սկզբանե եղել է խիստ արդյունավետ: Արդեն 1997թ. հունիսի 12-17-ը ՀՀ սահմանադրական դատարանի պատվիրակությունը դատարանի նախագահ Գ. Հարությունյանի գլխավորությամբ պաշտոնական այց է կատարել Ֆրանսիա, որը կարևոր նշանակություն է ունեցել ֆրանսիական կողմի հարուստ փորձի ուսումնասիրման և ՀՀ

---

[15] Նույն տեղում, թ.4-5:

[16] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 326, ց. 9, գ. 35, թ. 18:

սահմանադրական դատարանի պրակտիկ գործունեության մեջ ներառելու ուղղությամբ:

Տեղական մարմինների միջև համագործակցությունը

Հայ-ֆրանսիական տեղական մարմինների միջև համագործակցությունն առավել ցայտուն է դրսևորվել երկու երկրների տարբեր քաղաքների միջև պատմականորեն ձևավորված և մեր օրերում նոր լիցքով շարունակվող բարեկամական ու գործնական շփումներում: Այդ առումով հարկ է նշել Երևան ու Լիոն քաղաքների միջև սկիզբ առած համատեղ հետաքրքրությունների շրջանակներում գործնական կապերը: Տեղի են ունեցել Երևանի և Լիոնի քաղաքապետարանների տարբեր ոլորտների մասնագետների փոխայցելություններ, որոնց ընթացքում մշակվել են կոնկրետ ծրագրեր: Դրանցից արժանահիշատակ է Երևանի միասնական ինֆորմացիոն ցանցի ստեղծումն ու դրա արդյունավետ գործարկումը[17]:

Ավելի քան 15 տարվա պատմություն ունի Ալֆորվիլ և Աշտարակ քաղաքների միջև ծավալված համագործակցությունը: Դեռևս 1992թ. երկու քաղաքների միջև կնքվել է համագործակցության պայմանագիր, որից հետո նրանց պատվիրակությունները պարբերաբար հանդիպել են ու դրա արդյունքում իրականացրել տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներն ընդգրկող համատեղ ծրագրեր: Ալֆորվիլի քաղաքապետարանը մշտապես աջակցություն է ցուցաբերել Աշտարակ քաղաքին առողջապահության, տրանսպորտի, կոմունալ հարցերի սպասարկման խնդիրների լուծման բնագավառներում[18]:

1996թ.-ից արդյունավետ համագործակցություն է ծավալվել ՀՀ Լոռու և Ֆրանսիայի Պրովանս-Ալպ-Կոտ-Դ'Ազյուր մարզերի, ինչպես նաև Թալին և Վալանս քաղաքների միջև: Այն ընդգրկել է տարբեր բնագավառներ՝ կադրերի վերապատրաստում, էներգետիկա, մշակույթ, սոցիալական ոլորտ և շրջակա միջավայրի պաշտպանություն: 1999թ. ապրիլի 22-ին Պրովանս-Ալպ-Կոտ-Դ'Ազյուր մարզի ռեգիոնալ խորհրդի նիստի օրակարգային հարցերի թվում էր

---

[17] Նույն տեղում, թ.22-23:
[18] Նույն տեղում, թ. 24:

նաև 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ հիմնախնդիրը: Մարզխորհրդի նիստին մասնակցել և ելույթ են ունեցել Լոռու մարզպետարանի ներկայացուցիչները[18]: Սերտ կապեր են հաստատվել Ֆրանսիայի Հայ բժիշկների միության Մարսել քաղաքի համապատասխան բաժանմունքի ու Լումինիի ճարտարապետական բարձրագույն դպրոցի հետ:

Հիշարժան են Վանածոր ու Ֆրանսիայի Բանյո, Ստեփանավան և Ֆրանսիայի Դեսին քաղաքների միջև ծավալված բարեկամական ու փոխադարձ օգնության վրա հիմնված հարաբերությունները: Համագործակցության շրջանակները լայն են եղել՝ ներառելով առողջապահական ու քաղաքաշինական ոլորտները, կրթությունը, գիտությունը, մշակույթը[19]:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ հայ-ֆրանսիական սերտ հարաբերությունների ընդհանուր համատեքստում իրենց արժանի տեղն են ունեցել երկու երկրների պետական կառույցների արդյունավետ և գործնական շփումները, որոնք, մեր խորին համոզմամբ, չեն սպառել զարգացման ներուժը և ապագայում դրանց էլ ավելի սերտ գործակցության ականատեսն ենք լինելու:

---

[18] Նույն տեղում, թ. 23-24:

[19] "France Armenie". Fevrier, 1999, p. 2-3.